ԳԻՏԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱ
НАУЧНАЯ ИНФОРМАЦИЯ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԱՐԽԻՎՆԵՐԸ

Մեզ մոտ՝ Սովետական Հայաստանում զգայի աշխատանք է տարվում պատմության նյութական հուշարձանների պահպանման, վերականգնման ուղղությամբ։ Սակայն տվյալ հոդվածում մեր խոսքը գնալու է հայ ժողովրդի պատմության գրավոր հուշարձաններից արխիվային վավերագրերի պահպանման մասին։ Թե որպիսի տառապանքների ու անձնազոհությունների գնով են մեր նախնիները պահպանել անցյալի գրավոր ժառանգությունը, որի շնորհիվ մենք այսօր ունենք Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտը՝ Մատենադարանը, դա հայտնի է մեր մշակույթով զբաղվող ամեն մի մտավորականի։ Սակայն հայ ժողովրդի անցյալը միայն մագաղաթյա ձեռագրերում չի ամփոփված։ Վերջին 250—300 տարվա հայ հասարակական միտքը արտացոլված է աշխարհի բոլոր անկյուններում լույս տեսած պարբերական մամուլի էջերում, ինչպես նաև բազմազան ու բազմաթիվ վավերագրերում ու գրագրություններում։

Ցունենալով պետականություն, հայ ժողովուրդը հնարավորություն չուներ գեթ մասամբ այդ բոլորն ի մի կենտրոնացնելու, մշակելու, պահպանելու և շրջանառության մեջ դնելու։

Դրությունը բոլորովին փոխվեց 1920 թ. նոյեմբերից հետո, երբ երկրում հաստատվեցին սովետական կարգեր։ Կառավարման օրգանների, գերատեսչությունների և նրանց տեղական հաստատությունների գործունեության հետևանքով առաջացած պաշտոնական բոլոր գրագրությունների վարման, պահպանման և օգտագործման մասին պետք է հոգ տարվեր արդեն պետական մակարդակով։

Հիմք ընդունելով Վ. Ի. Լենինի ստորագրությամբ 1918—1919 թթ. ընդունված հայտնի դեկրետները երկրում արխիվային գործի դրվածքի հիմնական սկզբունքների մասին, երիտասարդ հանրապետության ղեկավարներն ու հայ անվանի մտավորականները կազմակերպեցին սեփական թանգարաններն ու պետական արխիվները։

Ավելի քան 60 տարում հայ պատմաբանները, արխիվային ծառայության աշխատողները, պաշտոնական, պատմական արժեք ունեցող թղթերի կույտերի հավաքումից սկսելով, քայլ առ քայլ առաջ տարան իրենց ժողովրդի գրավոր հուշարձանների մասունքների ի մի կենտրոնացման գործը՝ հիմք դնելով պետական արխիվի ստեղծմանը։

Դժվար է այսօր թեկուզ ամենաընդհանուր գծերով ներկայացնել այն ծանր ուղին, որով անցել են հայ արխիվային աշխատողները։ Հատկանշական է, որ մեր ժողովրդի ականավոր դեմքերից Ալ. Մյասնիկյանը, Ս. Կասյանը, Ա. Մրոավյանը, Աշ. Հովհաննիսյանը և մյուսները կանդնի, ակտիվ հետաքրքրություն էին ցուցաբերում Սովետական Հայաստանի պետական արխիվ ստեղծելու գործում։ Նրանց ստորագրությամբ առկա են բազմաթիվ պաշտոնական որոշումներ, հրահանգներ, կարգադրություններ արխիվային նյութերի հավաքման և պահպանման կազմակերպման մասին։ Թե ինչպիսի հետևողականությամբ է իրականացվել արխիվային գործի կազմակերպումը Սովետական Հայաստանում, այդ մասին կարելի է հիմնավոր տեղեկություններ քաղել «Բաներեր Հայաստանի արխիվների» 1976 թ. առաջին համարից, որն ամբողջովին նվիրված է արխիվային գործի տարեգրությանը։ Մենք չենք նկարագրելու այն ժամանակները, երբ արխիվները տեղավորված էին մութ ներքնահարկերում, առանց ամենատարրական հարմարությունների, ունենալով ընդամենը մի քանի աշխատողներ։

Սկսենք այսօրվա վիճակից։ Ի՞նչ են ներկայացնում իրենցից Սովետական Հայաստանի պետական կենտրոնական և այլ կարգի արխիվները, ի՞նչ դեր են խաղում նրանք մեր ժողովրդի մշակութային կյանքում և ի՞նչ պրոբլեմներ ունեն լուծելու։ Ինչպես ամբողջ Սովետական Միության մեջ, մեզ մոտ ևս լիակատար շրջադարձ է կատարված արխիվների գործում, որն ամենից առաջ արտահայտվում է հետևյալում.

Արխիվային ծառայությունը, որպես պետական, քաղաքական, գիտական, հասարակական նշանակություն ունեցող բնագավառ, իր համապատասխան օրգաններով անմիջապես գործում է կառավարությանը կից և ներկայացնում է բավական լայն ցանց ունեցող հաստատությունների համակարգ։ Միության մասշտաբով և ազգային հանրապետություններում արխիվային գործը ղեկավարում են Մինիստրների խորհրդին առընթեր գլխավոր արխիվային վարչությունները։ Սովետական Հայաստանում մտածված կերպով հիմնվել են մեր ժողովրդի հոգևոր մշակույթի, հանրապետության ժողովրդական տնտեսության և կառավարման բոլոր բնագավառների գործունեությամբ առաջացած պաշտոնական գրագրություններն ընդգրկող պետական կենտրոնական արխիվներ։ Դրանք են՝

ա) ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ)։ Սա ամենահարուստ արխիվն է, որտեղ կենտրոնացված են սովետական կարգերի ժամանակ պետական, կառավարական, տնտեսական, կուլտուրական, գիտական, հասարակական և այլ հաստատությունների գործունեությամբ ստեղծված վավերագրերը։ Այդ արխիվի մասին գաղափար կազմելու համար միայն ասենք, որ այնտեղ պահվում է ավելի քան մեկ միլիոն արխիվային միավոր (գործ) կամ մի քանի տասնյակ միլիոն վավերագրեր։

բ) ՀՍՍՀ Պատմության պետական կենտրոնական արխիվ (ՊՊԿԱ), որտեղ ամփոփված են մոտավորապես 1600—1920 թթ. ժամանակաշրջանի, անշուշտ, ամենից շատ 1820 թ. հետո ընկած ժամանակահատվածի վավերագրերը։

գ) ՀՍՍՀ Հայ դպրբերական մամուլի պետական կենտրոնական արխիվ (ՀՊՄՊԿԱ), որտեղ ի մի են հավաքված հայատառ բոլոր թերթերը, ամսագրերը, հանդեսները, նրանց խմբագրությունների գործերը։

դ) Մի առանձին հարուստ կենտրոն է ՀՍՍՀ կինոֆոտոֆոնո փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվը (ՖՖԿՓՊԿԱ), որտեղ կենտրոնացված են Սովետական Հայաստանում արտադրված բոլոր կինոֆիլմերը, ֆոնո և ֆոտո վավերագրեր։ Սա փաստորեն երեք ինքնուրույն բնագավառներ ընդգրկող մշակույթի օջախ է։ Կինո, ձայնագրություններ, լուսանկարչություն. դրանցից յուրաքանչյուրը իր արխիվապահոցներում պարունակում է հարյուր հազարավոր պատմագիտական և ճանաչողական նշանակություն ունեցող նյութեր։ Արխիվին կից գործում է արվեստի վերաբերյալ գրականության հիանալի գրադարան։

ե) ՀՍՍՀ Գիտատեխնիկական փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվ (ԳՏՓ ՊԿԱ), մի կարևորագույն կենտրոն, որտեղ ամփոփված են Տարտարապետական, կոնստրուկտորական գիտահետազոտական հաստատությունների գործունեությամբ առաջացած փաստաթղթերը։

զ) Երևան քաղաքի պետական կենտրոնական արխիվ։ Լենինականում, Կիրովականում, Ղափանում և Էջմիածնում գործում են պետական կենտրոնական արխիվի մասնաճյուղերը։

Բոլոր քաղաքներում, շրջաններում, մինիստրություններում և գերատեսչություններում, արտադրական միավորումներում, բուհերում գործում են համապատասխան արխիվներ իրենց հաստիքային աշխատողներով։

ՀՍՍՀ-ում գործում են բազմաթիվ արխիվներ, որոնց հաստիքային աշխատողների թիվը հասնում է մոտ 800 հոգու։ Այսօրվա վիճակով բոլոր պետական կենտրոնական արխիվներն ունեն առանձին շենքեր իրենց լաբորատորիաներով, արհեստանոցներով, ընթերցարաններով և գիտատեղեկատու գրադարաններով։

Ահա կես դարից ավելի է, ինչ ձեռնարկվում է միջոցառումների մի ամբողջ համակարգ, որպեսզի Սովետական Հայաստանից դուրս այլ պետական, ազգային արխիվներում պահվող հայ ժողովրդի պատմության հետ առնչվող նյութերի իսկականները կամ պատճենները փոխադրվեն Սովետական Հայաստանի արխիվները։ Այդ ուղղությամբ կատարված է մեծ մասշտաբի աշխատանք։ Հիշատակենք, որ վավերագրեր են բերվել Սովետական Միության մի շարք քաղաքներից, օրինակ՝ Լենինգրադից, Մոսկվայից, Աստրախանից, Կազանից, Քիշնևից, Ռոստովից, Լվովից, Կիևից, Բաքվից, Թբիլիսիից, Մինսկից, ինչպես նաև արտասահմանից՝ Լոնդոնից, Բուխարեստից, Սոֆիայից, Փարիզից, Վաշինգտոնից, Լոս Անջելեսից, Կահիրեից, Դամասկոսից, Վիեննայից և այլն։ Միության մեջ և Սփյուռքում ձեռք են բերվել մի քանի հարյուր հայ անվանի մարդկանց անձնական արխիվներ։ Ձեռնարկած հետևողական միջոցառումների շնորհիվ Սովետական Հայաստանի պետական արխիվային ֆոնդը մեծ չափերով աճեց և այսօր նրա միավորների թիվը միլիոններով է հաշվվում։

Արխիվները պահվում են բազմահարկ շենքերում, խնամքով ու հատուկ ռեժիմով։ Շուտով շահագործման կհանձնվի բոլորովին նոր, հատուկ արխիվադարանների եզակի շենքը։

Համարյա ամեն տարի ձեռք են բերվում կամ ստեղծվում ընդհանուր կամ անձնական կարգի արխիվային նոր ֆոնդեր։ Վերջին տասը տարում իրենց տեղը գտան կամ հիմնվեցին այնպիսի արժեքավոր ֆոնդեր, ինչպիսիք են՝ Կաթողիկոսական դիվանը, Պողոս Նուպարի արխիվը, Անդ-

բանիկ Օզանյանի, Հայկ Բժշկյանի, Հայկական դիվիզիաների պատմության, մարշալ Բաղրամյանի, ծովակալ Իսակովի, ակադեմիկոսներ Լ. Ա. և Հ. Ա. Օրբելիների, Ստ. Լիսիցյանի, Գյուտ Աղանյանի և տասնյակ այլ անվանի գործիչների արժեքավոր ֆոնդեր, որոնք հաջողությամբ օգտագործվում են հետազոտողների կողմից։

Սովետական Հայաստանի կառավարությունը մեծ ուշադրություն ու հոգատարություն է հանդես բերում արխիվների նյութատեխնիկական բազայի ամրապնդման և համապատասխան հաստիքներով ապահովելու գործում։

Հայաստանի արխիվները ունեն իրենց հանդեսը՝ «Բանբեր Հայաստանի արխիվների», որի 75-րդ հատորը լույս կտեսնի այս տարի։ «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսը վավերագրական կարգի պարբերական է, որը լույս է տեսնում տարին երեք անգամ, ամեն մի հատորը 15 մամուլ ծավալով, 2000 օրինակ տպաքանակով։ «Բանբերի» հիմնական ուղղությունը նորահայտ, թեմատիկ բնույթի վավերագրերի հրապարակումն է։ Նրա բազմաթիվ համարները նվիրված են եղել առանձին թեմատիկ հարցերի, ինչպես օրինակ՝ «Գայ», «Ա. Ֆ. Մյասնիկյանի ռազմական գործունեությունը 1917—1925 թթ.», «11-րդ Կարմիր բանակի մարտական ուղին», «Սովետական Հայաստանի գունավոր մետալուրգիայի պատմությունը», «Ակադեմիկոսներ Հ. Ա. և Լ. Ա. Օրբելիներ», «Հայկական դիվիզիաների վավերագրական պատմությունը» և բազմաթիվ այլ թեմատիկ հարցեր։ «Բանբերի» ամեն մի հատորը փաստաթղթերի հարուստ մի ժողովածու է, և դրանով էլ պայմանավորված է այն ակտիվ հետաքրքրությունը, որ դրսևորում է հանդեսի նկատմամբ գիտական հասարակայնությունը։

Պետական արխիվային ֆոնդը մեր հանրապետության անգնահատելի գանձերի թվին է պատկանում։ Հայ հասարակական մտքի տիտանների մաքառումները Եվրոպայում, հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը, ազգային-ազատագրական և հեղափոխական բանվորական շարժման էվոլյուցիան, ռուսական ցարիզմի գաղութականությունը Կովկասում և Հայաստանում, Անդրկովկասի ժողովուրդների համատեղ պայքարը օտար նվաճողների դեմ, առաջին համաշխարհային պատերազմը և հայ ժողովրդի ճակատագիրը, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, հայ ժողովրդի վերածնունդը սովետական կարգերի ժամանակ, Հայրենական մեծ պատերազմը և հայ ժողովրդի մասնակցությունը. ահա բնավ ոչ լրիվ թվարկումն այն բնագավառների, որոնց վերաբերյալ հարյուր հազարավոր վավերագրեր կան Սովետական Հայաստանի պետական արխիվներում։ Ենդիրն այն է, որ այդ ամբողջ հարստություններն առատորեն օգտագործվեն այնպես, ինչպես մինչև օրս օգտագործվել են «Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակի, Հայկական սովետական հանրագիտարանի, տասնյակ ժողովածուների և հարյուրավոր մենագրությունների, հետազոտությունների համար։

Վերջին 3—4 տարում մեր աշխատողները Լենինգրադի, Մոսկվայի և այլ արխիվներից Թամանյանի մասին հայտնաբերեցին ավելի քան 1000 նոր փաստաթղթեր։ Շուտով այդ վավերագրերը կհրապարակվեն և ընթերցողն ավելի մոտիկից կճանաչի այդ ավնիվ հոգու տեր մեծ մարդուն, որին անառարկելիորեն պետք է համարել մեր ժողովրդի ազգային պարծանքներից մեկը։

Կարելի է որոշակիորեն ասել, որ այսօր Սովետական Հայաստանում հասարակական (և ոչ միայն հասարակական) գիտությունների գծով հազիվ թե որևէ մեկը կարողանա քիչ թե շատ լուրջ հետազոտություն կատարել առանց պետական արխիվների աղբյուրների օգտագործման։

Այստեղ մենք տեղին ենք համարում հիշեցնել հայ արխիվային աշխատողների ջանքերով ստեղծված առավել կարևոր և առավել արժեքավոր վավերագրերի ապահովագրական ֆոնդի ստեղծման մասին։ Ահա այսօր ավելի քան 8 միլիոն միավոր միկրոպատճեններ են հանված, որոնք համապատասխան տեխնոլոգիական պրոցեսներ անցնելուց հետո մշակվել են ըստ թեմաների, արկղավորվել և ստեղծված գիտատեղեկատու ապարատի շնորհիվ կարող են արագորեն մրցվել գիտական շրջանառության մեջ։ Նման աշխատանքները շարունակվում են, այժմյան լաբորատորիաները հնարավորություն են տալիս տարեկան կես միլիոն կադր ապահովագրական ֆոնդ ստեղծել։

Միկրոֆիլմերի ֆոնդերը զգալիորեն հարստացել են նաև Լենինգրադի, Մոսկվայի, Բրիլիսիի և այլ քաղաքների կենտրոնական արխիվներում պահվող հայ ժողովրդի պատմության հետ առնչվող վավերագրերի միկրոպատճենահանման միջոցով։ Հարյուր հազար լչերի է հասնում նման կադրերի քանակը։

Սփյուռքի մեր բարեկամների, ինչպես նաև առանձին ազգային արխիվների հետ համագործակցության շնորհիվ մեծ քանակությամբ միկրոպատճեններ են ձեռք բերվել նաև Լոնդոնի, Փարիզի, Վաշինգտոնի, Բուխարեստի և այլ ազգային արխիվներից։

Միկրոպատճենները, ինչպես գիտենք, շատ ոչ տեղ են գրավում, փոխադրումների համար դժվարություն չեն ներկայացնում, մնում է միայն

պահպանել խնամքի սահմանված ռեժիմը, ունենալ համապատասխան ապարատներ կարդալու համար։ Սովետական Հայաստանի պետական կենտրոնական արխիվներում այդ բոլոր պայմանները համարյա ստեղծված են և հետազոտողները հնարավորություն ունեն օգտվելու այդ անգնահատելի հարստություններից։

Գլխավոր արխիվային վարչությունն ունի իր կոլեգիան, որը ժամանակին քննարկում է արխիվային ծառայության համար կենսական նշանակություն ունեցող հարցերը և համապատասխան որոշումներ ընդունում։ Այստեղ կարևոր տեղ են գրավում նաև հիմնարկ-ձեռնարկությունների գործավարության դրվածքի բարելավման հարցերը, որոնց վերաբերյալ արխիվային հաստատությունները կրում են որոշակի պատասխանատվություն և տվյալ գերատեսչության ղեկավարության հետ մշակում են գործավարության հիմնական կանոնները։ Սա շատ կարևոր բնագավառ է։ Ցավոք, որոշ հաստատություններում, այդ թվում Հայկական ՍՍՀ ԳԱ-ում գործավարության վիճակը հեռու է բավարար լինելուց։ Որքան լավ լինի հիմնարկության գործավարության դրվածքը, այնքան լավ կլինի նրա արխիվի վիճակը։

Գլխավոր արխիվային վարչության գիտական խորհրդի կազմում ընդգրկված են հանրապետության հմուտ ղեկավար արխիվային աշխատողներ և անվանի գիտնականներ։ Այդ խորհուրդը իր նիստերում քննարկում է գլխավորապես արխիվային գործի տեսության ու պրակտիկայի զարգացման հիմնական ուղղություններն ու սկզբունքները, գիտահետազոտական աշխատանքների պլանները ու պատրաստի ժողովածուների հրատարակման հարցերը, ինչպես նաև մյուս գիտահետազոտական հաստատությունների հետ արխիվային հիմնարկությունների գիտական աշխատանքների կոորդինացման խնդիրները։

Վերջին տարիների ընթացքում արխիվային գործի տեսության և պրակտիկայի հարցերը հանգամանորեն քննարկվել են արխիվների միջազգային կոնգրեսներում Մոսկվայում (1964 թ.), Վաշինգտոնում (1976 թ.), Լոնդոնում (1980 թ.), Բոննում (1984 թ.) և միջազգային այլ համաժողովներում։ Այդ հարցերը Սովետական Միությունում քննարկվել են նաև միութենական մասշտաբի գիտական կոնֆերանսներում։ Սովետական Միությունում կառավարական մի քանի որոշումներ են ընդունվել արխիվային ծառայության և գործավարության դրվածքի բարելավման մասին։ Նման որոշումներ ընդունել է նաև Սովետական Հայաստանի կառավարությունը։ Ամենահակիրճ կերպով նշենք այդ քննարկումների և որոշումների հիմնական բովանդակությունը և ուղղությունը։

Ելնելով հասարակության համաշխարհային զարգացման միտումներից և միլիարդներով ստեղծվող վավերագրերի առկայությունից, գիտականորեն հիմնավորել, թե պետություններում և համաշխարհային կազմակերպություններում այդ վավերագրերից ինչը ընտրել, ինչը առանձնացնել ապագայի համար և ինչը ոչնչացնել։ Առայժմ մեր երկրում այդ վավերագրերից միջին հաշվով 8—12 տոկոսն են երաշխավորվում մշտապես պահելու համար, իսկ որոշ երկրներում՝ ավելի բարձր տոկոսը, ուրեմն մոտ 90 տոկոսը պետք է ոչնչացվի։

Հոգալ պետական պահպանության ընդունված արխիվների հավերժ պահպանումն ապահովելու մասին։ Ինչպիսի արխիվադարաններ կառուցել, ինչպիսի միկրոկլիմա ստեղծել, գրագրությունները ինչ որակի թղթի վրա կատարել և ինչ որակի թանաքով։ Նոր տեխնիկայի ներդրման հարցերը արխիվային գործում։

Արդեն պահպանության ընդունված միլիոնավոր գործերի համար ինչպես ստեղծել գիտատեղեկատու ապարատ, հաշվառել և մշակել այդ ամենը գիտական շրջանառության մեջ դնելու կանոնները։

Մի առանձին սրությամբ միջազգային և ազգային կոնգրեսներում, կոնֆերանսներում քննարկվել են արխիվային հաստատություններում աշխատող կադրերի մասնագիտական և ընդհանուր դիտելիքների մակարդակի բարձրացման հարցերը, որպեսզի նրանք տիրապետեն իրենց գործին, իմանան 2—3 օտար լեզուներ, իմանան տեխնիկական միջոցների հիմունքները և այլն։

Քննարկվել են նաև առանձին պետությունների արխիվային հաստատությունների փոխադարձ կապերի ուժեղացման, զարգացող երկրներին օգնելու հարցերը և այլն։

Ինչպես շատ երկրներում, այնպես էլ մեր հանրապետությունում արխիվային գործի զարգացման հիմքում դրված են վերը թվարկված սկզբունքները, սակայն հաշվի են առնվում նաև մեր ժողովրդի պատմության առանձնահատկությունները։

Ինչպիսի՞ պրոբլեմներ կան Սովետական Հայաստանի արխիվային ծառայության և նրա հաստատությունների գործունեության ոլորտում։

1. Շարունակել կատարելագործել արխիվադարաններում արդեն կենտրոնացված արխիվային ֆոնդերի պահպանման և օգտագործման ձևերն ու մեթոդները։ Բացառել տեքստերի խամրումը կամ ոչնչացումը։ Առավելագույն ուշադրություն դարձնել արխիվային շենքերի անվտանգության ապահովմանը, ավելի հուսալի և հարմարավետ շենքեր կառուցել արխիվների համար։

2. Հետևողականորեն շարունակել նոր նյութերի հայտնաբերման և ձեռքբերման ուղղությամբ տարվող աշխատանքները։ Հասկանալի է, որ խոսքը չի վերաբերում պետական հիմնարկություններին, որոնք սահմանված ժամանակը լրանալուց հետո իրենց նյութերը հանձնում են պետական պահպանության։ Խոսքը վերաբերում է մեր երկրի և օտար երկրների պետական ու ազգային արխիվներում եղած հայ ժողովրդի պատմության հետ առնչվող նյութերի իսկականները կամ պատճենները ձեռք բերելուն, մի հարց, որ բավականին դժվարին է և մեծ ջանքեր է պահանջում։ Նույնը կարելի է ասել նաև մեր երկրում և Սփյուռքում առանձին անհատ մարդկանց մոտ եղած արխիվային նյութերի ձեռքբերման մասին։ Եթե այդ շարվի այժմ, հետագայում ավելի դժվար կլինի կամ անհնարին։ Փորձը ցույց է տալիս, որ փոխադարձ ըմբռնման պայմաններում և հայրենասիրական զգացումներից ելնելով այս բնագավառում կարելի է հասնել որոշակի հաջողություններ։

Պետք է հոգալ, որպեսզի արխիվային ֆոնդերը ավելի լայն մասշտաբներով գիտական շրջանառության մեջ դրվեն և օգտագործվեն ի շահ ժողտնտեսության, գիտության և կուլտուրայի և ամենից առաջ՝ պատմական գիտության զարգացման։

Արխիվների, որպես պատմության գրավոր հուշարձանների, պահպանումը սահմանված է օրենսդրական ակտերով, բայց նրանց պահպանումը որպես քաղաքացիական բարոյական սուրբ պարտականություն պայմանավորված է նաև իր ժողովրդի անցյալի ու ներկայի նկատմամբ ամեն մի անհատի գիտակցությամբ ու ներքին մղումով։

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԵԾ ՄԱԶՐԱ ԳՅՈՒՂԻ ՎԻՄԱԳՐԵՐԸ

Հայտնի է, որ վիմական արձանագրությունները կարևոր նշանակություն ունեն հայ ժողովրդի պատմության և մշակույթի ուսումնասիրության համար։ Նրանք հնարավորություն են ընձեռում պարզաբանելու, ճշտելու, լրացնելու ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքին, քաղաքական անցուդարձերին, կրոնա-եկեղեցական հարաբերություններին վերաբերող խնդիրները, ուսումնասիրելու առանձին հուշարձանների, ինչպես նաև թագավորական կամ իշխանական տների, մելիքական տոհմերի, բնակավայրերի ու տեղանքի պատմության կնճռոտ հարցերը։ Նրանք արժեքավոր նյութ են բովանդակում մակրո- և միկրոտեղանունների, ժողովրդի նիստուկացի, սովորույթների, բնակչության շրջանում տարածված անձնանունների համակարգի և հայոց լեզվի առանձին բարբառների հետազոտման համար[1]։

Արդեն հրատարակվել է «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի 6 պրակ, ուր տեղ են գտել պատմական Հայաստանի Սյունյաց աշխարհի Գեղարքունիք, Սոդք, Վայոց ձոր գավառների, Զանգեզուրի, Ապստեի հովտի, Ղարաբաղի և Անի քաղաքի շուրջ 4441 արձանագրություն։ «Դիվանի» հրատարակման գործում հատկապես մեծ է վիմագրագետ Ս. Գ. Բարխուդարյանի երախտիքը։ Որքան էլ բարեխղճորեն ու մանրակրկիտ կատարված լինեն վիմագրական նյութերի հավաքման ու հրատարակության աշխատանքները, որպիսիք են «Դիվանի» հատորները, այնուամենայնիվ, բնականաբար, ենթադրելի է, որ կարող են լինել անտես մնացած արձանագրություններ, աչքից վրիպած կամ ճշտման կարիք ունեցող ընթերցումներ։

Ստորև ներկայացնում ենք Վարդենիսի շրջանի Մեծ Մազրա բնակավայրի չհրատարակված կամ որոշ բացթողումներ ունեցող արձանագրությունները, տալով նաև պատմական տեղեկություններ գյուղի մասին։

Մեծ Մազրա գյուղը գտնվում է Վարդենիս քաղաքատիպ ավանից 4 կմ հյուսիս-արևելք, Մասրիկ (Մազրա) գետի հովտում, Վարդենիս—Կրասնոսելսկ ավտոխճուղու վրա։ Գյուղի հին

1 Հայերեն վիմական արձանագրությունների գիտական նշանակության մասին մանրամասն տե՛ս Դիվան հայ վիմագրության. պր. I, Երևան, 1966, էջ V—XIV։ Վիմագրերն ունեն նաև հուշարձանի համար դեկորատիվ-հարդարողական նշանակություն (տե՛ս Հ. Գ. Խալփախչյան. Արձանագրությունները հայկական ճարտարապետական ստեղծագործության կոմպոզիցիայում.— «Էջմիածին», 1959, Բ, էջ 52—61, Գ, էջ 45—53, Դ, էջ 44—49)։

2 Տեղանունն իր հիմքում ունի մազրայ «արտ» բառը, շրջակայ մշակելի հողեր» բառը, որ Հր. Աճառյանը համարում է «հնության ժամանակի բառ» և նույնացնում արաբ. mazra'a «արտ, հանդ» բառի հետ (տե՛ս նրա Հայերեն արմատական բառարան. հ. III, Երևան, 1977, էջ 223)։